445

1. Հիշի՛ր քո Տեր Աստծուն
Քո երիտասարդ օրերում,
Եվ Նա քեզ կմխիթարի
Այս չար աշխարհի կյանքում:

Հիսուսն է վեմը փրկության,
Նա է վահանը հավատքի,
Տերն է արդարության ճամփան
Եվ սերը մեր կյանքի:

2. Ուզում ենք Քեզ մոտ, ո՛վ Տեր, գալ
Եվ Քեզանով ուրախանալ,
Մեր սիրտը Քեզ մենք նվիրենք
Եվ Քեզանով հավետ ապրենք:

3. Եղի՛ր ներող, իմ հարազատ,
Ների՛ր քեզ վիրավորողին,
Սիրիր նրան, ինչպես որ Տեր
Հիսուս Քրիստոսը սիրեց քեզ:

4. Այսուհետև հիշի՛ր մեկ բան,
Որ Աստված քեզ շատ է սիրում,
Ինչքան էլ նեղ թվա ճամփան,
Տերն է քեզ միշտ առաջնորդում:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025